



ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

ԱՐԳՈՓՈՒՄ



ՊԵՏԳԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԱՆ

1926 ՅՈՒՆԻ 1-3

Tanops. —

21/2 miles N. 65° W. from town west
1500 metres: vase and Dr. L.

2/15 - 3/24 1927 - In valley 75 - 1
hours from town, a vase, & no more

2000 metres:

New York, 4 April, 1927
Ex. from Dr. S. H. Linton

3. 3. 6. 846.

P. O. BOX 13, 8 STA. P.
NEW YORK, N.Y.

~~Հ. Վ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.~~

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

ԱՄՓՈՓՈՒՄ Զ. ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ

1926 Յուլիս 1-3

Հայ կարմիր Խաչի Զ. Պատգմ. Ժողովը տեղի
ունեցաւ յուլիս 1-3 Robert Burns Hall-ի մէջ,
53 Berkeley St., Boston, Mass. :

Վարչութեան Առենապետուհի Տիկին Ա. Շալ-
ճեան, բարի գալուստ մաղթելով ներկաներուն,
ժողովը բացուած յայտարարեց :

Հետզհետէ խօսք առին, ընկերներ՝ Կ. Սասու-
նի, Հ. Բարագամեան, Լ. Ներսէսեան եւ Մ. Վերա-
ծին, որոնք ի վեր հանելով Հ. Կ. Խաչի անցեալի
գործունէութիւնը, ապագայի համար կարգ մը կա-
րեւոր թելագրութիւններ ըրին :

Ժողովին կազմը — Հայ կարմիր Խաչի Զ.
Պատգմ. Ժողովին կը մասնակցէին 28 մասնաճիւ-
ղեր, մնացեալներու մեծագոյն մասը որքան որ կա-
տարած էին իրենց պարտականութիւնը, սակայն
հեռաւորութեան եւ այլ պատճառներով պատգա-
մաւոր դրկած չէին :

Մասնակցող Մասնանիւղեր

- | | |
|------------------|----------|
| 1. — Պոկոթա | մէկ ձայն |
| 2. — Զարլսթառուն | մէկ ձայն |
| 3. — Զիքակօ | մէկ ձայն |

| | | |
|------|-----------------------|------------|
| 4.— | ԶԵՐԻ | մէկ ձայն |
| 5.— | ԻՆՅ ԱԷՆ ԼՈՒՒՂ | մէկ ձայն |
| 6.— | ԿՈՆԵԼՓ | մէկ ձայն |
| 7.— | ԿՈՂԹ | մէկ ձայն |
| 8.— | ՀԱՋԱԲՆՄ ԲԱՐՔ | մէկ ձայն |
| 9.— | ՀԵՎՐԻՇԻԼ | մէկ ձայն |
| 10.— | ԼԻՒ | մէկ ձայն |
| 11.— | ԼՈՆԵԼ | մէկ ձայն |
| 12.— | ՄԻՄՈՎԻԽԼ | մէկ ձայն |
| 13.— | ՄԻԱԲՆԱ | մէկ ձայն |
| 14.— | ՆԻՒ ԵՆՐՔ | երկու ձայն |
| 15.— | ՆԻԱԼԱՐԱ ԹՈԼ | մէկ ձայն |
| 16.— | ՆԻՒ ՊՐԻԲՈՐԹ | մէկ ձայն |
| 17.— | ԹԻԼԱՏԷԼՓԻԱ | մէկ ձայն |
| 18.— | ԲՈՆթԻԱՔ | մէկ ձայն |
| 19.— | ՓՐԱՎԻՄԷՆ | մէկ ձայն |
| 20.— | ԲՈՐԹԼԷՆՄ | մէկ ձայն |
| 21.— | ՍԻՐԱՔԻՎ | մէկ ձայն |
| 22.— | ԻՆԻԾՆ ՍԻԹԻ | մէկ ձայն |
| 23.— | ԵՆՐԹԻՔ | մէկ ձայն |
| 24.— | ՈՒԷՍԱ ՆԻՒ ԵՆՐՔ | մէկ ձայն |
| 25.— | ՀՈՒԱՅԹԻՆԱՎԻԽԼ | մէկ ձայն |
| 26.— | ՈՒՕԹՐԹԱՊՈՒՆ | մէկ ձայն |
| 27.— | ՈՒԱՄԱՐ | մէկ ձայն |
| 28.— | ՈՒՕՔԻԾՆ | մէկ ձայն |

Խորհրդականներ .— Պատղմ . Ժողովը միաձայնութեամբ որոշեց խորհրդակցական ձայնով հրաւիրել հետեւեալ ընկերուհի-ընկերները .

Տիկին Ա . Թէրլէմէզեան , Տիկին Ա . Բարադամեան , ընկերներ կ . Սասունի , Մ . Վերածին , Յ . Ա . Լեւոնեան , Ա . Վահէ , Ն . Տէստէկիւլ , Լ . Ներսէսեան , Բժ . Այճէմեան :

Դիւան .— Զ . Պատգմ . Ժողովը իր դիւանը
ընտրեց հետեւեալ կերպով .

Ա . Ատենապետուհի Տիկին Ի . Եղոյեան

Ա . Ատենադպրուհի Օր . Ա . Սարգսեան

Բ . Ատենադպրուհի Տիկին Ճլճեան :

Պատգամայնորներու իրաւասութիւնները նշդոդ
Յանձնախումբ :—

Այս Յանձնախումրին անդամ ընտրուեցան՝

Տիկին Մ . Սեղրաքեան

Տիկին Ա . Թովմասեան

Տիկին Ի . Եղոյեան

Օր . Ա . Ռոկանեան

Օր . Ա . Զատիկեան

Հաշուեֆննիչ եւ Յարաբերական քուղքերու
Քննիչ Յանձնախումբ :—

Այս Յանձնախումրին անդամ ընտրուեցան՝

Տիկին Ա . Գրիգորեան

Տիկին Մ . Գարրիէլեան

Տիկին Մ . Սեղրաքեան

Բանաձեւերու եւ Օրակարգի Յանձնախումբ :—

Ընտրուեցան՝

Տիկին Ե . Առաքելեան

Տիկին Ա . Թովմասեան

Տիկին Մ . Պօյաձեան

Նախահաշուի Յանձնախումբ :— Ընտրուեցան՝

Տիկին Ա . Թովմասեան

Տիկին Մ . Սեղրաքեան

Տիկին Ա . Գրիգորեան :

ԲԱՆԱՁԵՒԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Կանոնագրի վերաբննութիւն :— Պատգմ . Ժող.
վլ , լսելով Ե . Պատգմ . Ժողովի կողմէ նշանակուս

«Կանոնագրի Քննիչ Յանձնախումբ»ի, Կանոնագրի կարգ մը յօդուածներու փոփոխման առթիւ զեկոյցը, որոշեց.

Ա. — Բնդունիլ 20-րդ Յօդուածին նոր յաւելուածը. —

(Յաւելուած Յօդ. 20-ի. —

Երկրորդ հրաւէրին, եթէ ժողովը կրկին մեծամասնութիւն չունենայ, ներկաներու թիւը օրինական համարուելով ժողովը տեղի կ'ունենայ) :

Բ. — Բնդունիլ Յօդ. 45-ի փոփոխուած ձեւը, որ է.

(Յօդ. 45. — Կեդր. Վարչութեան ընտրելի կրրնան ըլլալ միայն այն անդամները, որոնք ընտրութեան օրէն, առնուազն երկու տարի շարունակ գտնուած են կ. Խաչի մէջ, եւ իրաւասու են):

Գ. — Բնդունիլ Յօդ. 49-ի փոփոխուած ձեւը. որ է:

(Յօդ. 49. — Կեդր. Վարչութիւնը ինքը կ'ընտրէ իր դիւանը, որ կը բաղկանայ, ատենապետէ, ատենապպիրէ եւ գանձապահէ, նախապատութիւն տալով անդամուհիներու):

Դ. — Անփոփոխ պահել 93-րդ Յօդուածը՝ որ է.

(Յօդ. 93. — Իւրաքանչիւր պատգամաւոր միայն մէկ քուէ կրնայ ունենալ եւ մէկ մասնաճիւղ ներկայացնել. բայց, հեռաւոր մասնաճիւղերը, եթէ ծախքերը նկատի ունենալով չկրնան իրենց թիւին համեմատութեամբ ներկայացուցիչ զրկել, կրնան իրենց ձայնը տալ ուրիշի մը, կամ ուղղակի Պատգմ. ժողովին):

Ե. — Բնդունիլ 94-րդ Յօդուածին բարեփոխուած ձեւը, որ է.

(Յօդ. 94. — Կեդր. Վարչութիւնը հաւաքարար երկու քուէով կրնայ մասնակցիլ Պատգմ. ժողովին, այդ իրաւունքը յանձնելով իր անդամներէն երկու-

ֆին : Կեդր . Վարչութեան միւս անդամները , կրնան օգտուիլ ձայնի իրաւունքով միայն ա'յն պարագային , երբ իրաւասու մասնաճիւղեր անոնց կուտան իրենց ձայնը) :

Զ . — Բոլորովին ջնջել 95-րդ յօդուածը , որ է
(Յօդ . 95 . — Կեդր . Վարչութեան բոլոր անդամները ձեռնպահ կը մնան , Վարչութեան գործերու մասին քուէարկութիւն կատարուելու պարագային) :

Պարքերաքերք . — Պատգմ . Ժողովը , լսելով Վարչութեան զեկոյցը , եւ պատղամաւորներու թերու դէմ կարծիքները , որոշեց յետաձգել պարքերաթերթի մը հրատարակութիւնը՝ անորոշ ժամանակով , նկատի ունենալով նիւթական դժուարութիւնները :

Մալարիայի Քէմբէյն . — Նկատի ունենալով որ «Մալարիայի դէմ պայքար»ը , կը կարօտի մեծ գումարներու , Պատգմ . Ժողովը , Հ . Կ . Խաչի ուժերէն վեր նկատեց նման քէմբէյնի մը յայտարարութիւնը , եւ որոշեց մամուլով կոչ ուղղել Հայ հասարակութեան , կամաւոր նուէրներ ստանալ , բույնայն եւ այլ անհրաժեշտ դեղօրայք զրկելու համար Հայաստան , Սուրբա եւ Յունաստան :

Ներգաղք . — Պատգմ . Ժողովը , նկատի ունենալով որ ներկայի ամենաէական պահանջն է Հայ ժողովուրդի Փիղիքական պահպանումը , որոշեց օգտուիլ ներգաղթի բոլոր հնարաւորութիւններէն , եւ նիւթական լայն միջոցներով օգնել Հայ ժողովուրդին , մանաւանդ Հայ չափահաս որբերու Հայաստան փոխադրութեան դործին :

Մնայուն գործիչ . — Պատգմ . Ժողովը , լսելով պատղամաւոր ընկերուհի-ընկերներու թերու դէմ

կարծիքները, մնայուն գործիչի մը անհրաժեշտութեան մասին, որոշեց յառաջիկայ շրջանի համար ունենալ մնայուն գործիչ մը, եւ յանձնարարեց նորընտիր կեդր. Վարչութեան, որ կարող եւ խըլճամիտ ձեռքերու վատահի այս խիստ կարեւոր պարտականութիւնը:

Նահատակուած մտաւորականներու զաւակները — Ժողովը միաձայնութեամբ որոշեց, մասնաւոր պիտմէ մը յատկացնել նահատակուած մտաւորականներու անշափահաս զաւակներուն կրթութեան գործին:

Թուրքերու եւ Արարեներու քով գտնուած որբեր. — Պատզմ. Ժողովը, հրահանգեց նոր կեդր. Վարչութեան, բանակցութիւններ վարել Սուրիոյ զանազան վայրերու մէջ դոյցութիւն ունեցող Հ. Կ. Խաչի մասնաճիւղերու հետ, եւ հնարաւորութեանց ծանօթանալէ վերջ «Մէկ որր մէկ ոսկի» Փօնտի մը կազմակերպութեան ձեռնարկէ, ազատազրելու համար մեր թշուառ բեկորները:

Ձեռնարկներ. — Պատզմ. Ժողովը, յանձնարարեց կեդր. Վարչութեան, հրահանգել բոլոր մասնաճիւղերուն, որպէսզի իւրաքանչիւրը օգտուելով զաղութային պայմաններէն, ջանան օգտագործել տեղական լաւագոյն ուժերը, եւ աշխատին ըստ կարեւոյն հաճելի դարձնել իրենց ձեռնարկները, նախազատուութիւն տալով գեղարուեստական բաժնին: Յաճախ կազմակերպեն դաստիարակիչիչ երեկոյթներ, սերտ յարաբերութիւն պահեն ընկերներու, ընկերուհիներու եւ համակիրներու միջեւ, եւ ապահովեն զաղութին յառաջաղէմ տարրին աջակցութիւնը:

Նախահաշիւ .— Պատգմ . Ժողովը , նկատի ու-
նենալով նախահաշուի Յանձնախումբի զեկոյցը ,
յառաջիկայ 926—27 տարեցրջանի համար սահմանեց
հետեւեալ նախահաշիւը .

| | |
|------------------------------------|-------------|
| Գրասենեակ-մթերանոց | 600 · 00 |
| Քարտուղարութեան | 1560 · 00 |
| Դիւանական | 400 · 00 |
| Ճանապարհածախս (գործիչով միասին) | 450 · 00 |
| Մնայուն դործիչ (Հաւանական) | 1560 · 00 |
| Ցունաստան , Սուրիա , Պալքաններ | 3000 · 00 |
| Հայաստան-Ատրպատական | 2000 · 00 |
| Նահատակ մտաւորականներու զաւակներ | 600 · 00 |
| Մտաւորականներ և տարագ . ուսանողներ | 800 · 00 |
| Հանդերձահաւաք (առաքման ծախքեր) | 700 · 00 |
| Չի նախատեսուած ծախքեր | 600 · 00 |
| Հ . Կ . Խաչի հիմնադրամ | 2500 · 00 |
| <hr/> | |
| Գումար | §14770 · 00 |

Տեղեկագիր Կեդր . Վարչութեան .— Զ . Պատգմ .
Ժողովը , լսելով Կեդր . Վարչութեան 925—926 շրր-
ջանի գործունէութեան ընդհ . տեղեկագիրը , լսելով
միաժամանակ , Հաշուեքննիչ , Դիւանական և Յա-
րաբերական թուղթերու Քննիչ Յանձնախումբերու
գնահատական տեղեկադրերը , Կեդր . Վարչութեան
բացատրութիւնները , պատգամաւոր ընկերուհի և
ընկերներու արտայայտութիւնները , իր գոհունա-
կութիւնը յայտնեց Կեդր . Վարչութեան և անոր
գործունէութիւնը գտաւ գնահատելի :

Նորիհակալիք .— Որոշուեցաւ յանուն Հ . Կ .
Խաչի Զ . Պատգմ . Ժողովի չնորհակալութեան գրեր
ուղղել , Հ . Յ . Կեդր . Կոմիտէին , «Հայրենիք»ի
խմբագրութեան , Ֆրէզնոյի Հայ Գաղթ . Միութեան

եւ ընկեր Ա. Զամալեանի, որոնք ամէն կերպով ա-
ջակից եւ օժանդակ եղան Հ. Կ. Խաչի ձեռնարկնե-
րուն:

Որոշուեցաւ ողջոյնի նամակներ զբկել, Աթէնքի
և Պէյրութի մասնաճիւղերուն, որոնք իրենց կա-
րելին ըրած են օգտակար դառնալու համար իրենց
շրջանի գաղթականութեան, ինչպէս նաև Հ. Կ.
Խաչի բրօրականտի գործին:

1926-1927 շրջանի գործունեութիւն.— Պատգմ.
Ժողովը նկատի ունենալով յառաջիկայ տարեշրջա-
նի գործունէութեան ծրագիրը, եւ այդ առթիւ կա-
տարուած կարծիքներու փոխանակութիւնը, պատ-
գամաւոր ընկերուհի-ընկերներու օգտաշատ թելա-
դրութիւնները, կազմեց նոր շրջանի գործունէու-
թեան ուղեգիծը, յանձնելով զայն նորընտիր կեղը.
Վարչութեան՝ ի գործադրութիւն:

Կեդր. Վարչութեան կազմ.— Զ. Պատգմ. Ժո-
ղովը նոր շրջանի համար կեցր. Վարչութեան ան-
դամ ընտրեց հետեւեալները.—

Տիկին Ա. Շալճեան

Տիկին Ա. Ահարոնեան

Տիկին Ի. Վարդերեսեան

Տիկին Ս. Խօշապճեան

Օր. Ա. Պասմաճեան

Ընկեր Տքթ. Ղ. Մ. Աճէմեան

Ընկ. Պ. Գավաֆեան :

Ց ՈՒ Ց Ա Կ
ՄԱՍՆԱՑԻՒՂԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ, Հ. Կ. ԽԱԶԻ
ԸՆԴՀ. ԶԵՐՆԱՐԿՎՆԵՐՈՒ
1925 ՅՈՒԼԻՒՍ 1 — 1926 ՅՈՒԼԻՒՍ 1

| Առանձակագրություն | Անդամական համար | Անդամական համար | Հայտապեսական համար |
|---------------------|-----------------|-----------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|
| Համարի համար | 10.00 | | | 94.00 | 21.00 | 15.00 | | | 140.00 |
| Պատճեն | 5.00 | | 50.00 | 18.50 | | | | | 73.50 |
| Պէտքանորդ | | | | 140.00 | 30.00 | 20.00 | | | 190.00 |
| Պինկէտթը | 25.00 | | | 39.50 | 25.00 | 10.50 | | | 100.00 |
| Պութոն | 52.30 | | | 10.00 | | | | | 62.36 |
| Պրէնտֆօրտ | | | | | | | | | |
| Պրէտտաք | | | | | | 1.00 | | | 1.00 |
| Պրութին | 35.00 | | | 185.00 | | 21.50 | | | 241.50 |
| Քէմտըն | | | | | 6.00 | | | | 6.00 |
| Զարլոթառուն-Միլֆօրտ | | | 40.00 | 10.00 | | | | | 50.00 |
| Զլոի | 30.00 | | | 25.75 | 15.00 | | | | 70.75 |
| Զիքակօ | | | 100.30 | 150.00 | | | | | 250.36 |
| Քլիվէնս | 50.00 | | | 109.50 | | 30.50 | | | 190.00 |
| Քանքըրտ | | | | | | | | | |
| Տիթրոյիթ | | | | | | | | | |
| Տէլլրէյ | 49.70 | | 216.50 | | | | | | 266.20 |
| Խոթ Սէն Լուիզ | 30.00 | | | 396.50 | 9.00 | 14.50 | | | 450.00 |
| Կոլթ | 22.65 | | | | 25.00 | 15.00 | 8.00 | | 70.65 |
| Կրէստ Բաբէսս | 25.50 | | 8.00 | 38.55 | 7.00 | | 12.50 | | 91.55 |
| Կրանիթ-Միթի | | | | 100.00 | | | | | 100.00 |
| Կուէլֆ | 36.00 | | | 100.00 | | 10.00 | | | 146.00 |
| Հէծիլթըն | | | | 80.00 | | | | | 80.00 |
| Հարթֆըրտ | 23.35 | | | 165.00 | 21.00 | | | | 209.35 |
| Հէվրէիյլ | | | | 155.00 | 25.00 | | | | 180.00 |
| Հայլլնս Բարք | 78.00 | | | 512.00 | | | 30.00 | | 620.00 |
| Խնտիթն Հարպըր | | | | | | 10.00 | | | 10.00 |
| Խնտիթն Օբչըրտ | 24.00 | | | 100.00 | | 10.50 | | | 134.50 |
| Լոուէլ | 45.50 | 50.00 | | 100.00 | | 9.50 | | | 205.00 |
| Լորէսս | | | | 98.53 | | | 9.00 | | 107.53 |
| Լու Անձէլոս | | | | | | | | | |
| Լին | 22.50 | | 37.50 | 156.00 | 7.00 | | 20.00 | | 243.00 |
| Մեսինս | 10.00 | | | 115.00 | | 25.00 | | | 150.00 |
| Միսվիյլ | 10.00 | 20.00 | | 145.00 | 17.00 | 20.50 | | | 212.50 |
| Միլֆօրտ | | 60.00 | 150.00 | | | 5.00 | | | 215.00 |
| Նիւ Պրիթըն | | | | | | | | | |
| Նիւ Պրիթորթ | 11.46 | | | 80.00 | 15.00 | 12.00 | | | 118.46 |
| Նիւ Հէյլթըն | 21.20 | | | | 3.00 | 4.50 | | | 28.70 |
| Նիւ Եորք | 47.00 | | | 383.80 | | | | 18.50 | 449.30 |
| Նուարք | 13.60 | | | 166.70 | 5.00 | | 42.30 | | 227.60 |
| Նիւկարտա Ֆոլս | 45.50 | | 22.00 | 200.00 | | 17.50 | 15.00 | | 300.00 |
| Ֆիլատէլֆիա | | | | 850.00 | | | | | 850.00 |
| Բօրթէնստ | 32.00 | 60.00 | | 158.00 | 25.00 | 25.00 | | | 300.00 |
| Բութթէքէթ | | | | 55.00 | | | | | 55.00 |
| Բրավիլտէնս | | | 125.00 | 250.00 | | | | | 375.00 |
| Բէյսին | 12.24 | 30.00 | | 215.00 | | | 20.00 | | 277.24 |
| Բիչմօնտ | | | | 150.38 | 25.00 | 10.50 | | | 185.88 |
| Սէն Քաթէրինզ | | | | | | 10.00 | | | 10.00 |
| Սիրաքիւզ | 40.00 | | | 185.00 | 10.00 | 25.50 | 29.50 | | 290.00 |
| Թրոյ-Ռոթրվիլթ | | | | | 10.00 | | | | 10.00 |
| Եութիքս | 28.00 | | 70.00 | 40.00 | 13.00 | 10.00 | | | 161.00 |
| Ութթիթառուն | | | | 189.50 | | 10.00 | | | 199.50 |
| Ութթէկըն | 20.00 | | | 160.00 | 25.00 | | | | 205.00 |
| Ուէստ Հոպըն | 18.00 | | 21.58 | 172.00 | 31.00 | | | | 242.58 |
| Ուէստ Նիւ Եորք | 37.50 | | 103.62 | 232.00 | 16.00 | | 2.00 | | 391.12 |
| Հուայթինսվիլ | 21.00 | | | 212.00 | 17.00 | | | | 250.00 |
| Վինուսքի | | | | | 8.00 | | | | 8.00 |
| Վունսաքէթ | 10.75 | | | 43.49 | 20.00 | | | | 74.24 |
| Ուստը | 60.00 | 200.00 | 56.00 | 150.00 | | | | | 466.00 |
| Բօնթիք | | | | 75.00 | 10.00 | 15.00 | | | 100.00 |
| Գումար | 1,002.81 | 420.00 | 1,000.56 | 7,011.70 | 441.00 | 358.50 | 206.80 | | 10441.37 |

八

一
二
三
四
五
六
七
八
九